Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված
Հայ գրականություն, Արձակ, Ակնարկ
13+

Շիրվանզադե
Աղետի գոտում

I

Քանի մոտենում ենք Լենինականին, այնքան գնացքը դանդաղեցնում է իր ընթացքը, Նախավերջին կայարանից սկսած նա գնում է գրեթե բեռնատար սայլի դանդաղությամբ: Այդպես չի եղել առաջ, պարզ է, որ երկրաշարժը վնասել է և երկաթուղուն, աղավաղելով նրա գիծը, և մեքենավարը բավականաչափ զգույշ է հին աղետին մի փոքրիկը չավելացնելու համար:

Ինձ հետ միևնույն կուպեում գնում է մի տաճկահայ ընտանիք, մերթ աջ, մերթ ձախ լուսամուտով ստեպ-ստեպ գլուխը դուրս է բերում և անհամբեր նայում: Անգլիական կրթությամբ մի երիտասարդ պոլսուհի է, զվարթ, կենսախինդ: Նրա ամուսինը համակրելի դեմքով մի երիտասարդ է, ինչ-որ առևտրական գործեր ունի Լենինականում: Գնում է այնտեղ ստուգելու իր կրած վնասների չափը: Երկուսն էլ անհոգ են նյութական կորստի վերաբերմամբ. ցավում են միայն ազգաբնակության կորուստների և մարդկային զոհերի մասին:

— Ես ոչ մի պայմանով չեմ համաձայնվել զավակիս հետ կենալ բացօթյա կամ վրանին տակ,—ասում է տիկինը զրկելով իր երեքամյա զավակին, որ մի զարմանալի հանգիստ և խելացի մանչ է:

— Տեսնենք,— արտասանում եմ ես, զգալով, որ տիկինը չի տեսել այն սոսկալի հրեշը, որ կոչվում է երկրաշարժ:

Գիշերվա ժամի երկուսն էր, երբ հասանք վերջին կայարանը: Պլատֆորմի վրա խռնվել է ահագին բազմություն, որ անմիջապես հարձակվում է գնացքի վրա, իրարու հրելով, անիծելով ու հայհոյելով: Կանայք ավելի եռանդուն ու ճարպիկ են, քան տղամարդիկ: Խուճապն ուրեմն շարունակվում է, չնայելով, որ հիսունումեկ ժամ է անցել աղետի վայրկյանից: Փախստականներ են, որ շտապում են ազատվել այն բացառիկ մղձավանջից, որ հատուկ է միայն երկրաշարժին:

Շարքերը մի կերպ ճեղքելով; մտնում եմ առաջին կարգի դահլիճը: Քարե հատակի վրա սփռված են մարդկային կույտեր, գրեթե իրար վրա: Դրանք այն փախստականներն են, որ սպասում են առավոտյան գնացքին՝ Թիֆլիսից դեպի Երևան: Ով ինչ կարողացել է վերցնել իր հետ, վերցրել է: Ցնցոտիների կապոցները խառնվել են քիչ թե շատ ունևորների ճամփարկղերի հետ և կազմում են մի միապաղաղ զանգված, որտեղ չկա ո՛չ դասակարգային խտրություն և ո՛չ դիրքերի զանազանություն: Բնության զարհուրելի հարվածը մարդկանց ձգել է միևնույն փոսի մեջ, ուր ձուլվում ու միանում են տարբեր հոգեբանություններն ու մտայնությունները: Յուրաքանչյուրը հավասար չափով է զգում իր ապիկարությունը կոսմոսի անհունության ու խորհրդավորության առջև: Ոմանք զարթնել են գնացքի դղրդոցից ու սուլոցներից և տրորում են իրենց քնահարբ աչքերը: Բայց կան շատերը, որոնք եկել են ուղղակի գիշերելու կայարանի կանգուն շինության մեջ, չունենալով ուրիշ ապահով օթևան: Սոսկումը երկրաշարժից տակավին չի ջնջվել նրանց դեմքերից: Ամեն մի թեթև աղմուկ կամ դղրդոց ցնցում է պատճառում թշվառներին:

Շուրջս դիտելու համար նստում եմ մի սեղանի մոտ: Մի խումբ զինվորականներ, առանձին սեղանի շուրջը նստած, թեյ են խմում: Մոտս նստած մի երիտասարդ ինձ ասում է, որ այդ մարդիկ մասնակցել են դիակներն ու վիրավորներին փլատակների տակից դուրս բերելու տխուր գործում: Հոգնածությունը նրանց մղում է դեպի քոլն, ձայները հետզհետե թուլանում են, գլուխները մեկը մյուսի հետևից թեքվում են սեղանին:

— Ի՞նչ դեր է կատարել Կարմիր Բանակն աղետի ժամին,— հետաքրքրվում եմ ես:

Երիտասարդը հուզված ձայնով նկարագրում է այն խոշոր օգնությունը, որ ցույց է տվել բանակն աղետյալներին:

— Եթե չլինեին այդ անձնազոհ մարդիկ, խուճապը կլիներ դժոխային և զոհերի թիվը եռակի,— ավարտում է երիտասարդը:

— Եղել են թալանի կամ գողության դեպքեր:

— Մինչև այժմ և ոչ մեկը: Պետք է ասել, որ ժողովուրդն ինքն էլ իրեն պահել է զուսպ, ոչ ոքի գլխով չի անցել թալանի կամ գողության միտքը:

— Դուք ի՞նչ քաղաքացիական դիրք ունիք,— շարունակում եմ ես հետաքրքրվել:

— Ես ուսուցիչ եմ:

— Ո՞ւր եք գնում:

— Ոչ մի տեղ, եկել եմ կայարանում գիշերելու, բայց ահա չորրորդ գիշերն է, չեմ կարողանում քնել:

— Անքնությունը ոչինչ, ես հալուցինացիա ունեմ, — միջամտում է մի ուրիշ երիտասարդ,— թվում է ինձ, որ ամեն ինչ պտտվում է շուրջս, և առաստաղը ահա-ահա պիտի փլչե: Ահ, վախենում եմ, որ խելագարվեմ: Եվ գունաթափ երիտասարդը, իր հնամաշ վերարկուի մեջ կծկվելով, հեռանում է ներվային քայլերով: Մի ծերունի, սրան ու նրան դիմելով, շարունակ հարցնում է.

— Լուսաբացին շա՜տ է մնում: Ոմանք ծիծաղում են: Մարդն ինձ թվում է աննորմալ: Շտապում եմ դուրս գալ պլատֆորմ: Օդը խեղդուկ է: Որ վագոնի մեջ են ընկներներ Երզնկյանն ու Կարինյանը,— հարցնում եմ կայարանի ծառայողներից մեկին:

— Համար 17:

Հեռու չէ: Բարձրանում եմ վագոն: Քնած են: Վագոնապահը, որ մի ռուս ծերունի է, ինձ դիմավորում է ոչ այնքան սիրալիր: Հասկանալի է. մարդն անքուն է և հսկում է աշխատավորների կարճատև հանգիստը: Մի կերպ համոզում եմ ծերունուն ընկեր Մռավյանի նամակը հանձնել հանրապետական Արտակարգ հանձնաժողովի քարտուղարին: Մի քանի վայրկյան անցած՝ ինձ դիմավորում է մի երիտասարդ, որի խելացի աչքերը սիրալիր ժպտում են պենսնեի տակից:

— Ցավում եմ, ընկեր Ծ..., մի տասը րոպե առաջ չեկաք,— ասում է նա հոգնած ձայնով,— բոլոր տեղերը բռնված են: Բայց հանգիստ կացեք, ես ձեզ համար տեղ կգտնեմ գիշերելու համար:

— Խնդրում եմ ոչ ոքի չանհանգստացնել. ես կարող եմ վերադառնալ կայարանի դահլիճը:

— Ո՛չ, ո՛չ, գնանք համար երկրորդը: Համար երկրորդ վագոնը կցված է համար տասնութերորդին: Սիրալիր երիտասարդը մեկին խնդրում է տեղափոխվել չգիտեմ ուր, և ես բռնում եմ տեղահան եղածի բազմոցը: Բայց ես մինչև լույս չեմ կարողանում քնել իմ ներվերի գրգռումից:

Ժամի վեցին ոտքի վրա եմ: Դուրս եմ գալիս վագոնից, մի ժամ պտտում եմ պլատֆորմի վրա: Եղանակը մեղմ է, նույնիսկ ջերմ, երկինքը ջինջ, ծագող արեգակը պայծառ: Ամենազոր բնությունը կատարել է իր դիվային գործը և այժմ ժպտում է: Մի կարծեք անամոթաբար: Օ՜օ, ոչ. այդ ժպիտն է առայժմ ահա այնտեղ ավերակների վրա հեծկլտող ազգաբնակության միակ սփոփանքը: Երանի նա շարունակվի երկար օրեր, մինչև որ աղետյալներն ունենան որևէ օթևան անձրևներից, ձյուն ու սառնամանիքից պատսպարվելու համար:

— Օ՜օ, բարև եք եկել, էֆենդի,— լսում եմ հանկարծ մի ծանոթ ձայն:

Ետ եմ նայում. Լենինականի տաճկական հյուպատոսն է, որի հետ ունեմ մի քանի ամսվա ծանոթություն: Նրա հետ է իր դեռահաս ամուսինը... Երկուսն էլ արտահայտում են իրենց անկեղծ վշտակցությունը բարեկամ ժողովրդին հասած թշվառության համար: Ապա եվրոպականորեն կրթված հյուպատոսն ավելացնում է.

— Մեծ հաճույք կպատճառեիք ինձ, եթե բարեհաճեք տեղավորվել իմ վագոնում:

— Մեծապես շնորհակալ եմ, էֆենդի, ես արդեն ունեմ օթևան: Բայց ասացեք խնդրեմ, ձեր սահմանակից վայրերո՞ւմ ևս եղել է երկրաշարժ:

— Տակավին պաշտոնական տեղեկություն չունեմ: Հազիվ յոթևկես ժամն է, և արդեն Հանրապետական Արտակարգ հանձնաժողովը ոտքի վրա է, չնայելով, որ մինչև գիշերվա ժամի երեքն աշխատել է: Մարդիկ շտապով մի-մի բաժակ թեյ են խմում, թեթև նախաճաշում հաց ու պանրով, միևնույն ժամանակ արագ-արագ կարգադրություններ են անում: Չկա ոչ մի ձևականություն, ոչ մի ձանձրացուցիչ հապաղում: Հանրապետության եռյակը շատ լավ է զգում, թե որքան զազրելի ու վնասակար է դանդաղամիտներին հատուկ մանրությունը նման դեպքերում: Այնտեղ, Գավգործկոմի հոյակապ շինության մեջ, որ բարեբախտաբար կանգուն է մնացել քաղաքի կենտրոնում, կուտակվել են հազարավոր անելիքներ. պետք է շտապել: Կարգադրությունները թափվում են կարկտի պես, քարտուղարը գործում է ինչպես մի լարված մեքենա: Երեք-չորս հոգի երեսուն մարդու գործ են կատարում:

Ընկեր Ա. Կարինյանն ինձ առաջարկում է իր հետ առաջին հերթին այցելել այն գյուղերը, որոնք ամենից ավելի են ենթարկվել ավերման: Առայժմ գնում ենք Քաղգործկոմ: Ավտոմոբիլը մեզ տանում է մի փողոցով, որտեղ տները մեծ մասամբ կանգուն են և միայն տեղ-տեղ փլել են նրանց վերին մասերը: Առաջին տպավորությունս այնքան էլ զորեղ չէ, եթե չլինեին աջ ու ձախ հրապարակների ու շուկաների վրա սփռված անթիվ վրանները, կարելի էր կարծել, որ աղետն այնքան էլ խոշոր չէ: Բայց արտաքինը խաբուսիկ է, հետո կիմացվի, թե այդ կանգուն տներն ու տնակները որքան են վտանգված:

Մի փողոցում տեսա Խորհրդային Վրաստանի հրդեհաշեջներին իրենց մետաղյա կասկաներով: Նրանք Կարմիր Բանակի զինվորներին հավասար օգնություն են մատուցել աղետյալներին: Եղբայրական աննախընթաց օգնություն, որի նմանը գոնե ես չեմ տեսել երբեք, քառասունևերեք տարի ապրելով հայ-վրացական միջավայրում, ընդհակառակը, միշտ եղել եմ ականատես փոխադարձ գժտությունների, նախանձի և ատելության: Եվ ահա չնայելով ավերված քաղաքի ողբերգական պատկերներին, սիրտս բաբախում է ցնծությունից: Համեմատում եմ մռայլ անցյալը ներկայի պայծառության հետ և սկսում եմ խորապես հավատաք, որ այդ անցյալն առ միշտ հանձնված է պատմության խավար էջերին: Քաղգործկոմի շինությունն արդեն լեցուն է բազմությամբ: Այստեղ է, որ առայժմ որոշվում են անելիքները: Բավական ընդարձակ և սիրուն կահավորված դահլիճում խառնվել են ամենքը, որ կոչված են աջակցելու Հանրապետության Արտակարգ հանձնաժողովին և սպասում են կարգադրությունների: Ընկերներ Երզնկյանը և Դուրգարյանը արդեն դռներից ներս չմտած՝ տալիս են իրենց հրամանները: Ընկ. Կարինյանը լրացնում է թերթերը և ուղղում ներմուծում որոշումների մեջ: Հակասություններն աննշան են, վիճաբանությունները ունեն վայրկենական տևողություն: Ամեն ինչ վճռվում է ընդհանուր համաձայնությամբ, ընկերաբար: Զգացվում է, որ գործի մարդիկ բնազդաբար իսկ արհամարհում են ակադեմիադ կան վեճերը մի գործում, որտեղ երկարաբանությունը քայքայիչ թույն է:

Հայացքս ընկնում է Լենինի հոյակապ պատկերի վրա, որ բռնել է բարձր պատի ամբողջ կեսը: Որակյալ բանվորի պարզ հագստում, ձեռները խոթած պանթալոնի գրպանները, մի քիչ կորամեջք, գլուխը թեթևակի ծռած նայում է արծվային աչքերով կնճռված հոնքերի տակից, որոնք մի-մի սլաք են դիտողի մտքի համար: Նա նայում է հեռուն և թափանցում ապագա պատմության խորքերը, որպես աներևույթ զորությունից ներշնչված մարգարե:

Մտաբերեցի այդ պատկերի իսկականը: Փարիզումն էր. չգիտեմ 1906, թե՞ 1907 թվականին, «Կաֆե-Սուֆլես»-ում, ռուս հեղափոխական էմիգրանտների սիրեցյալ սրճարանն էր՝ սկսած Հերցենի օրերից: Հիշում եմ Իլյիչի նեղ նշաձև աչքերը, որ,

կարծես, բարեսրտաբար հեգնում էին դիտողին: Նա մտախոհ էր, սակավախոս և սառնարյուն, հակառակ Մարտովի շատախոսության և ներվային ջղաձգումներին: Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, այն ժամանակ Լենինը կենում էր Լատինական արվարձանի նեղ և աննշան փողոցներից մեկում, «Ռյու-Մուֆթար»-ի վրա, և հաճախ գնում էր Զվիցերիա՝ ինքը միայն գիտեր ի՛նչ գործով:

Չգիտեմ ով է նկարել ներկա ընդհանրացած պատկեր, բայց նա վերին աստիճանի բնական է և արվեստի տեսակետից սքանչելի: Ուրիշ ավելի բնորոշ և ավելի գեղեցիկ դիրք տալ մարդկային կյանքի մեծագույն հեղաշրջման հեղինակին. անկարելի էլ.

— Շշեղվե՛ք, — կարդում եմ ես այդ պատկերի դիմագծերի վրա:

Ես անհամբեր սպասում եմ ընկ. Կարինյանին, որ վերջացնե իր կարգադրությունները: Մղվում եմ հոգով այնտեղ, որտեղ դաժան բնությունն իր վատագույն գործն է կատարել: Ժամի տասնևմեկն էր, երբ մենք ուղևորվեցինք գյուղերը:

II

Ալեքսանդրովկա, Դահառլի, Բայանդոլը, Տավշան-Ղշլաղ, Ղազարապատ, Սվանվերդի, այս են անուններն այն քարակույտերի, որ ես այցելեցի քաղաքի ավերակները դիտելուց առաջ: Դրանք մի ժամանակ կոչվում էին գյուղեր: Այդտեղ քարը քարի վրա չի մնացել: Այդտեղ ստորերկրյա կատաղի փոթորիկը կարծես ածելիի մի հարվածով ամեն ինչ կտրել է հիմքից, ինչպես գերանդին՝ խոտը մինչև արմատ:

Գերեզմաններ են այժմ երբեմնի մարդկային օթևանները: Այն տարբերությամբ, որ այստեղ տապանաքարերի փոխարեն հողակույտերի վրա թառ են եղել մարդկային ուրվականներ, մռայլ ինչպես ինքը մահը: Նրանք այլևս չեն ողբում ու չեն հեծկլտում. երկուուկես օրվա կսկծից այլևս ցամաքել են նրանց աչքերը: Եվ այդ ահռելի լռության մեջ բնության արհիրավիրքն է խոսում ավերումների և Սպանությունների դժոխային տեսարաններով:

Մենք մոտենում ենք առաջին քարակույտին, որի անունն է Ալեքսանդրովկա: Ուրվականները մեկիկ-մեկիկ շարժվում են դանդաղորեն, ինչպես խորը քնից արթնացած անդամալույծներ: Եվ շուտով մեր ինքնաշարժի շուրջը կազմվում է մի կենդանի օղակ: Լացի և ճիչերի այլևս ոչ մի ձայն: Նայում են մեր երեսին լուռ ու մունջ, որպես գիշերային ստվերները անտառների խորության մեջ: Սպասում են, որ մենք խոսենք: Բերել ենք արդյոք նրանց համար որևէ սփոփանք: Դաժան վայրկյաններ, որ ինձ թվում էին հավիտենականություն:

Մի թեթև հարց ընկ. Կարինյանի հուզմունքից դողդոջ ձայնով և ահա մեկը մյուսի հետևից բացվում են մղձավանջից քարացած լեզուները և միևնույնը կրկնում են տասնյակ բերաններ միևնույն պարզ, բայց աղեկտուր խոսքերով:

«Օթևան տվեք մեզ, պատսպարան տվեք մեր անասուններին: Նրանք կարող են կոտորվել ցրտից: Մենք էլ կկոտորվենք, եթե չպատսպարվենք: Այս արև օրերը

երկար չեն տևելու: Ահա ամպերն արդեն կուտակվում են: Երկինքն էլ է դավաճանելու մեզ, ինչպես դավաճանեց երկիրը»:

Այս է ընդհանուր առմամբ տեղական բարբառով բյուր անգամ կրկնվող պահանջների իմաստը: Այդ մարդկանց համար անասունների գոյությունը նույնչափ թանկ է, որքան իրենց զավակների կյանքը: Խնդիրը միայն տնտեսականը չէ, գյուղացին անասնին սիրում է հոգեբանորեն, վասնզի նա է նրա միակ ընկերը կյանքում և ամենից ավելի նրան է ընծայում իր հավատը:

Ընկ. Կարինյանը, յուրաքանչյուրին համբերությամբ լսելով, պահանջներն ամփոփում ու ձևակերպում է: Ընկ. Աշոտ Հախումյանն արձանագրում է: Ես նյութեր չեմ վերցնում ամեն ինչ թողնելով իմ տպավորությանն ու հիշողությանը:

— Ապահով եղեք, ամեն ինչ կտրվի ձեզ, միայն մի հուսահատվեք,— կրկնում է ընկեր Կարինյանը հուզված ձայնով, և ես այդ ձայնի մեջ զգում եմ զգայուն քաղաքացու խորին վիշտը, պարզությունն ու անկեղծ օրերը դեպի մարդ էակը:

— Պիտի կրկնվի՞ աղետը,— հարցնում են աղետյալները:

Ինչ պատասխանել միամիտ հարցին:— Ընկ. Կարինյանը դիմում է իմ փորձառության օգնությանը:

— Ոչ, սիրելիներ,— ասում եմ ես ահաբեկված մտքերը հանգստացնելու համար,— սովորաբար մեծ շարժերը չեն կրկնվում, բայց մեծից հետո լինում են թեթև երերումներ մի քանի օրեր կամ մի քանի շաբաթ:

Թշվա՛ռ մարդիկ, այլևս ի՞նչ ունիք կորցնելու ամեն ինչ կորցնելուց հետո:

Դիտում եմ ավերակների սև կույտերը և միտքս սավառնում է դեպի իմ ապաբախտ ծննդավայրը: Հիշում եմ նրա 1872 թվականի զորեղ երկրաշարժի հետևանքները: Ինչ հսկայական տարբերություն այնտեղի և այստեղի ավերումների մեջ: Այնտեղ երկրաշարժը եղել է նույն չափ զորեղ, որչափ այստեղ և գուցե ավելի, բայց այնտեղ տները թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում այդպես չեն ավերվել: Այնտեղ նրանք խորտակվել էին մեծ մասամբ կիսով չափ և նույնիսկ ամենաշատ տուժածների պատերը մնացել էին եթե ոչ ամբողջովին, գոնե կիսի կամ քառորդի չափ կանգուն: Այստեղ չկա ոչ միայն որևէ կանգուն շենք, այլև ոչ մի հետք պատերի:

Ի՞նչ է դրա պատճառը: Պատասխանը պարզ է նույնիսկ ոչ մասնագետի համար: Շամախիում, 1859 թվականի մեծ երկրաշարժից խրատված, մարդիկ թե՛ քաղաքում և թե՛ գյուղերում շենքերը կառուցում էին այսպես կոչված «կապերով», այն է՝ յուրաքանչյուր երեք-չորս շարք քար ու շաղախից հետո պատերի մեջ ձգում էին երկայն գերաններ, որոնք շարքերը շաղկապում էին: Այնտեղ ևս տների տանիքները հողից են, ուրեմն և ծանր, բայց նրանք փլելով չէին խորտակում պատերը:

Մի համեմատություն ես: Եթե Լենինականի առաջին շարժը, որ եղել է երեկոյան յոթ ժամին, այսինքն մութն ընկնելուց հետո՝ Շամախիում լիներ, ոչ մի մարդ չէր վստահանալ տուն մտնել, ամենքը կգիշերեին բացօթյա, որքան էլ ցուրտը սաստիկ լիներ: Այնինչ այստեղ մարդիկ փորձառություն չէի ունեցել զգուշանալու համար: Այս է գլխավոր պատճառը զոհերի շատությանդ ընկնում է մի ճերմակ տաղավարի վրա, որի ճակատին կարդում եմ՝ «Վրաստանի Կարմիր Խաչ»: Մտնում եմ ներս:

Այստեղ կա ամեն ինչ, որ անհրաժեշտ է վիրավորներին և հիվանդներին խնամելու համար, նաև երեք հարյուր զույգ ներքնաշոր, և մարդիկ կազմ ու պատրաստ, ամեն վայրկյան թշվառներին օգնության հասնելու:

— Ե՞րբ են եկել այդ մարդիկ,— հետաքրքրվում եմ ես:

— Գրեթե միաժամանակ Հայ Կարմիր Խաչի հետ,— պատասխանում են ինձ:

Նորից բաբախում է իմ սիրտն ուրախությունից, նորից ներկան համեմատում եմ մերձավոր անցյալի հետ: Այդպես չի եղել առաջ ցարերի ժամանակ: Ժողովուրդների թշվառության օրերին ազգություններն իրենց փոխադարձ «եղբայրական վշտակցություններն» արտահայտել են հոգևորականության փարիսեցիական խոսքերով, որոնց խորքում տիտղոսն աչքը միշտ տեսել է սուտն ու կեղծիքը: Այնինչ այստեղ գործս է խոսում: Այո, ես եկել եմ մի նոր աշխարհ, որ չունի ոչ մի նմանություն անցյալի հետ, ի՜նչպես չցանկանալ, որ այդ նոր աշխարհը շարունակի իր գոյությունը հավիտյան:

Անցնում ենք փոշիների թանձր մառախուղի միջով հետևյալ քարակույտը, երրորդը, չորրորդը: Արփաչայի ափերին է տարածված աղետի վայրը, մի քանի քայլ հեռու Տաճկաստանի սահմաններից: Որքա՜ն մարդկային արյուն է թափվել այստեղ ազգերի անվերջ ընդհարումների ժամանակ, թող պատմե այդ հանդարտիկ հոսող գետը: Այժմ ուրիշ է...

Զոհերի քանակության տեսակետից առաջին տեղը բռնում է Դահառլին: Այդտեղ սպանվել են 115 մարդ: Գրեթե չկա ընտանիք, որ չի ունեցել կորուստ:

Մոտենում է ինձ աղքատիկ հագուստով 18—20 տարեկան մի աղջիկ հողերից ու արևից գորշացած պղնձագույն դեմքով:

— Դուք Շ.-ն ե՞ք...

— Այո:

Տեղական դպրոցի ուսուցչուհին է եղել: Մի քանի հատուկտոր խոսքերով նկարագրելով երկրաշարժի վայրկյանները, հանկարծ կանգ է առնում: Խոսքերը խեղդվում են նրա կոկորդի մեջ, կապտագույն աչքերը լցվում են արցունքով: Խեղճ աղջիկ: Նրա սիրեցյալ աշակերտներից մի քանիսը զոհվել են տիեզերքի կույր դաժանությանը: Նա է եղել աղետի առաջին գույժը քաղաք տանողը, գիշերային մթության մեջ, ամայի դաշտերում կտրելով յոթ վերստ:

— Ահա նայեցեք, այն է մեր դպրոցը,— ցույց է տալիս աղջիկը հեռուն, ուր սև քարերի միջից լցվել են ահագին գերաններ, կարծես պարծենալով իրենց ոճիրով:

— Չեմ հիշում, որ քարակույտի վրա, գյուղացիները ժպտալով հայտնում են, թե նախընթաց գիշերը երեք երեխաներ են ծնվել:

— Վիժո՞ւմ:

— Ոչ, բնական ծնունդ:

Մահու և կյանքի խորհուրդը, բնության հավիտենական օրենքը — մի ձեռքով հափշտակել, մյուսով նվիրաբերել: Ինչո՞ւ ծառանալ ուրեմն նրա դեմ. չկա նրա համար կորուստ առանց վարձատրության:

Ես սպասում էի ավելի մեծ հուսահատություն աղետյալների կողմից: Ուրախ եմ ասելու, որ չտեսա իմ սպասածը: Վշտերը մեծ են, բայց լքումը բացակայում է: Հոգեկան զորավոր կորովի հնչյուններ են լսվում յուրաքանչյուրի ձայնի մեջ:

— Տվեք մեզ միջոց, շուտով մենք կվերականգնենք մեր տնտեսությունը,— ահա այն լեյտմոտիվը, որ լսեցի վեց քարակույտերի վրա:

Այդ մի սքանչելի երաժշտություն էր ինձ համար:

Միջոցը մարդու և անասունի ժամանակավոր օթևաններն են: Ցորեն կա մեծ քանակությամբ, բայց հողի տակ է: Գործիքները նույնպես:

Այդ բոլոր պահանջները դրված են և արդեն կատարվում են: Բայց ի՞նչն է հայ գյուղացու այդ հոգեկան կորովի աղբյուրը: Նախ նրա դարավոր տոկունությունից և հազարավոր տառապանքներից դարբնված բնույթը և ֆիզիկական կազմը: Նայեցեք այդ կնճիռներով գծավորված պղնձագույն դեմքերին, այդ հսկա լանջերին, պողպատյա բազուկներին, ամրակազմ ազդրերին, խրոխտ քայլվածքին, ամեն ինչ ձեզ ներշնչում է հույս և հավատ դեպի մերձավոր ապագան: Իսկ փոքրիկները, այդ շիկահեր տղաներն ու աղջիկները, կարծես, բոլորը կապարից են ձուլված, մեկը մյուսից ամուր, մեկը մյուսից համարձակ: Ոչ, այդ առեղծվածային ժողովուրդը, որ չի կորել մինչև այժմ, այսուհետև երբեք չի կորչի...

Կա գյուղացու այսօրվա հոգեկան ամրության մի ուրիշ պատճառ: Նոր է այդ պատճառը, բայց նույն չափ զորավոր, որչափ դարավորը: Այդ գյուղացու գիտակցությունն է, թե այսօր երկրի տերն ինքն է և թե իր կռնակում ունի մի հզոր պաշտպան:

Ե՞րբ է նա տեսել, որ երկրի իշխանավորները գան իր հետ խոսելու առանց մտրակի, նույնիսկ աղետների օրերին: Ե՞րբ է նա տեսել, որ այդ իշխանավորները լսեն իր ցավերը դժոխային համբերությամբ, արձանագրեն պահանջներն ամենայն մանրամասնությամբ, ոչ սոսկ ձևականության, այլ անհապաղ և սրբությամբ կատարելու համար: Սվանվերդի քարակույտի վրա աղետյալները խնդրեցին, որ շուտով ուղարկվեն վրանները:

— Վաղը կստանաք,— ապահովեց ընկ. Կարինյանը:

Մի ժամ հետո, երբ վերադառնում էինք քաղաք, հանդիպեցինք մի բեռնակիր ինքնաշարժի, որ արդեն տանում էր վրանները բաժանելու:

Թող ներվի ինձ այստեղ ևս մի համեմատություն անելու: Հիշում եմ իմ ծննդավայրի վերջին, այն է 1902 թ. երկրաշարժը: Այդ ժամանակ ես Բաքվումն էի: Միտս է բազմաթիվ աղետյալների գանգատները, դեսից-դենից եկած ողորմելի գումարներն իբրև նպաստ բաժանողների դեմ: Մեծ բաժինը հանգանակված գումարների «վշտակից» բարերարների կոկորդն էր անցնում: Այսպես, օրինակ, տալիս էին աղետյալին դիցուք հինգ ռուբլի և ստիպում էին նրան ստորագրել տասնհինգ ռուբլու ստացական: Նիկոլայ Երկրորդը, երևի շատ լավ էր ճանաչում իր մեծ ու պստիկ սատրապների վարքուբարքերը, որ չկամեցավ նրանց հանձնել իր նվիրած

հիսուն հազար ռուբլու բաշխումը և առանձին պատգամավոր ուղարկեց: Դրամի հետ, զեղծումները կատարվում էին ոչ միայն երկրի ադմինիստրացիայի, այլև հասարակական «ընտրյալների» ձեռքով, որոնք թուք ու մրով էին բաժանում իրենց կոկորդից պոկած կոպեկները...

Հանրապետական Արտակարգ հանձնաժողովը յուրաքանչյուր աղետյալ գյուղում նշանակել է երեք պատասխանատու. ընկեր նպաստի կանոնավոր բաշխմանը հսկելու համար: Քարակույտերի վրա ես տեսա նրանցից շատերին: Երբեք չեմ մոռանա այդ անձնվերների երկուսուկես օրվա ու գիշերվա անդուլ աշխատանքից, անքնությունից, անոթությունից դալկացած դեմքերը: Բարձրագույն գաղափարի ոգին էր գեղեցկորեն դրոշմված այդ գրեթե պատանի դեմքերի վրա և ինքնամոռացության հուրն էր փայլփլում նրանց խոհուն ու վառվռուն աչքերի մեջ:

Մարտիրոսների ու նահատակների հռչակը դարեր է գրավում մարդկության կուլտուրական պատմության մեջ: Թող իմ այս համեստ տողերը չվիրավորեն նորագույն գաղափարի հավատարիմ աշակերտների համեստությունը, տալիս եմ այն, ինչ որ պարտավոր եմ և կարող եմ տալ:

Տավշան-Ղչլաղ քարակույտի վրա մի քանի կանայք, տալով մեզ թղթի կտորների վրա սխալ-մխալ անգլերենով գրված հասցեներ, խնդրեցին, որ այդ հասցեներով նամակներ ուղարկենք Ամերիկա և դրամ խնդրենք իրանց համար: Մի կին հպարտորեն ցույց տվեց իր մի ինչ-որ մերձավորի շքեղ լուսանկարը— ուռած թշերով, փքված որովայնով, կուշտ դեմքով մեկին, որ չի մոռացել իր բուրժուական կերպարանքով շշմեցնել աշխարհի չտեսած միամիտ կնոջը: Արձագանք կտա՞ արդյոք այդ փաշայական ինքնագոհ դեմքն իր մերձավորի աղերսին: Չէ որ կուշտի հիշողությունը թմրում է անցյալի վերաբերմամբ:

Չեմ հիշում, որ քարակույտի վրա աղետյալներն ասացին.

— Մենք չենք ուզում մնալ այս անիծյալ երկրում, տարեք մեզ մի ուրիշ տեղ, տարեք Հյուսիսային Կովկաս կամ ավելի հեռու:

Սովորական երևույթ ինձ համար: Ամեն անգամ, երբ Շամախում երկրաշարժ է լինում, հուսահատված ազգաբնակությունը նույնն է ցանկանում:

Փախչել հեռու անհյուրընկալ հողից: Բայց անցնում են հուսահատության առաջին օրերը, ցանկությունը չքանում է, և մարդիկ մնում են իրենց տեղում: Այդ բնական է: Փորձեցեք երկու շաբաթ հետո այդ աղետյալներին առաջարկել չվել ուրիշ երկիր, նրանք կծիծաղեն...

Չորսուկես ժամ քարակույտերը դիտելուց հետո վերադարձանք քաղաք: